Այսպես, գործում առկա է «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲ ընկերության՝ որպես պատվիրատու, և փաստաբան Յուրի Մանվելյանի՝ որպես՝ կատարող, միջև 22.01.2024թ.-ին կնքված ծառայությունների մատուցման թիվ 07/ՅՄ-2024 պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր), որի 1.1-ին կետի համաձայն՝ նույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել նույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար՝ նույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով: Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուին մատուցել հետևյալ ծառայությունները՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 27.12.2023թ. «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 1061 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցապահանջ ներկայացնելու Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան և հանդես գալ որպես «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ: Պայմանագրի 3.1-րդ և 3.2-րդ կետերի համաձայն՝ նույն պայմանագրով ծառայությունների վարձատրության չափը կազմում է 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ: Վերոնշյալ գումարը ներառում է հարկերը և պարտադիր այլ վճարները: Վճարումը կկատարվի նույն պայմանագրի կողմերի ստորագրման պահից 3 օրվա ընթացքում:

Դատարանը վերոնշյալ պայմանագիրը դրանում պարունակվող բառերը և արտահայտությունները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի համաձայն տառացի նշանակությամբ մեկնաբանելու արդյունքում արձանագրում է, որ «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲ ընկերության և փաստաբան Յուրի Մանվելյանի միջև ծագել են քաղաքացիաիրավական հարաբերություններ, որոնցով, համապատասխանաբար, փաստաբան Յուրի Մանվելյանն պարտավորվել է նախապատրաստել հայցադիմում և այն ներկայացնել դատարան, ինչպես նաև մասնակցել ընդհանուր իրավասության դատարանում դատաքննությանը, իսկ «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲ ընկերությունը, իր հերթին, դրա դիմաց ստանձնել է 80000 ՀՀ դրամ գումար՝ որպես փաստաբանական ծառայության վճար, փաստաբանին վճարելու պարտավորություն:

Այնուհետև, գնահատելով փաստաբանի կողմից գործով փաստացի կատարված աշխատանքի ծավալը՝ Դատարանն արձանագրում է, որ հայցվորի փաստաբանի կողմից Դատարան է ներկայացվել հայցադիմում, որին կից, բացի ներկայացուցչին վերաբերող փաստաթղթերից, ներկայացվել են մի շարք ապացույցներ: Բացի այդ, հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացվել է հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու մասին միջնորդություն, որը Դատարանի կողմից բավարարվել է: Միաժամանակ գործի քննության ընթացքում կայացած մեկ դատական նիստին հայցվորի ներկայացուցիչն ապահովել է իր մասնակցությունը:

Արդյունքում՝ հաշվի առնելով փաստաբանի կողմից գործով փաստացի կատարված աշխատանքի ծավալի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը, գործի առանձնահատկությունը, նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, հաշվի առնելով այն, որ հայցը բավարարվում է ամբողջությամբ՝ Դատարանը կարծում է, որ հայցվորի փաստաբանի խելամիտ վարձատրության չափ պետք է համարել 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ գումարը և այն ներառել գործով դատական ծախսերի մեջ:

(VII). Եզրափակիչ մաս.

Դատարանը, հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով, 17-րդ հոդվածի 7-րդ մասով, 27-րդ հոդվածի 2-րդ մասով, 179-րդ, 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 360-362-րդ հոդվածներով,

ՎՃՌԵՑ

1. «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող Ծաղկաձորի համայնքապետարանի, երրորդ անձ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության՝ ՀՀ Կոտայքի մարզի

Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 27.12.2023թ. «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 1061 որոշումն և տվյալ որոշման ընդունման համար հիմք ընդունված ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի գնահատող հանձնաժողովի 18.12.2023 թվականի թիվ 3 արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ամբողջությամբ բավարարել.

1.1. անվավեր ճանաչել «ԾՔ-ԷԱՃԾՁԲ-24/1» ծածկագրով գնման գործընթացի շրջանակում 2023թ. դեկտեմբերի 18-ի ժամը 10:00-ի նիստի արդյունքներով գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 3 արձանագրության 1.1-րդ, 1.2-րդ և 2.1-րդ կետերով ընդունված որոշումները,

1.2. անվավեր ճանաչել ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 27.12.2023թ. «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 1061 որոշումը:

2. Դատական ծախսերը բաշխել հետևյալ կերպ.

2.1. պատասխանող Ծաղկաձորի համայնքապետարանից հօգուտ «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲ ընկերության բռնագանձել 65.000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի մասով դատական ծախսի հատուցում,

2.2. պատասխանող Ծաղկաձորի համայնքապետարանից հօգուտ «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲ ընկերության բռնագանձել 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի փոխհատուցում:

3. Վճռի կատարում ենթադրող մասը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ**

Ծանոթություն.

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ**